մոտ։ Մեկն ամրացնում էր երկու կից բլուրների գագաթները, մյուսը՝ նրանից ավելի հյուսիս՝ Քեշաբերդ սարի գլուխը։ Ամրացված էին և Ուզ գյուղի հանդեպ հյուսիսային կողմում բարձրացող գագաթները, ինչպես և Վաղուդի գյուղի արևելյան կողմում խոր ձորի ափին բարձրացող մեծ լեռան գագաթը[26]։ Այս բոլոր բերդերի արհեստական մասերը կառուցված են շատ նախնական տեխնիկայով։ Չկան տաշած քարով շարված պարիսպներ, ճարտարապետական առանձին նրբություններ, խնամքով ձևավորված բուրգեր։ Դրանք մեծ և փոքր անտաշ քարերից զանգված պատեր են կիր ու ավազի ամուր շաղախով իրար հետ միաձուլված, որոնք անքակտելի կերպով կպցրած են քարաժայռերին, կարծես նրանց բնական մասը լինեն։

Անշուշտ դարերի ընթացքում անհրաժեշտությունը դրդած պիտի լինի այդ պաշտպանական կառուցումների մեջ ընդհանուր նպատակներով շաղկապված սիստեմ հաստատելու և այդպիսով փոխադարձ օգնությունը դյուրացնելու։ Այդ սիստեմը չի եղել նախօրոք գիտակցորեն մշակված պլան, այլ ինքնապաշտպանական միջոցին դարերի փորձով թելադրված կայուն ցանց, որը լրացնում էր առանձին ժայռերի գլխին վտանգի ժամանակ շտապ հիմնվող դիրքերի և ձորերում ապառաժոտ կողերի մեջ փորված քարանձավների, բրառակնէրի, այդ պնդոցների ընձեռած հարմարությունները։ Ապագայի մանրազնին ուսումնասիրությանն է վերապահվում Զանգեզուրի զանազան ձորերում, հովիտներում, լեռնալանջերին, լեռնագագաթներին հայ բնակչության ինքնապաշտպանության միջոցին գրված դիրքերի նկարագրությունը և նրանց մեջ մի ժամանակ հաստատված փոխադարձ կապակցության դրսևորումը։ Դա կլիներ մի կարևոր էջ հայ ժողովրդի ռազմական արհեստի պատմության։ Առայժմ այդպիսի մի սիստեմի առկայությունը առանձնապես ցայտուն կերպով դրսևորվում է Ողջի (Օխչի) գետի հովտում, որտեղ պատմական Բաղք գավառում Սյունյաց թագավորների վերջին ներկայացուցիչները համառ կռիվներով կարողացան իրենց անկախությունը պաշտպանել ամեն կողմից սեղմող սելջուկյան օղակի մեջ մինչև 1170 թ.։ Այդ սիստեմով հեռատես կերպով դասավորված արհեստական ամրությունների օգնությամբ ամբողջանում էին այն պաշտպանական հարմարությունները, որ բնությունն էր այստեղ տրամադրում ապատության սիրող մարդուն։

Եթե Ողջու (Օխչու) հովտի բերանին գետի աջ ափին զետեղված՝ Մելիք-Փարսադանյանների տոհմական հին ամրոցը՝ Հալիձորի բերդը, համարելու լինենք համեմատաբար ավելի նոր ժամանակների գործ[27], նրա ռազմական դերը հնում պետք է վերագրել նույն ձորի ձախ ափի բարձր դիրքին բազմած, այժմ Ղըրղալա կոչվող բերդին, որը գտնվում է գրեթե Հալիձորի բերդի դիմաց, Շահարջիկ գյուղին կից, որը Բաֆֆին իր «Դավիթ Բեկ» վեպի մեջ[28] համարում է Ստեփաննոս Օրբելյանի հիշած Աշաղու[29] գյուղը։ Այդ բերդի ամրություններից գիտողի աչքի առջև բացվում է ամբողջ հովիտը, մի կողմից՝ մինչև այժմյան Կապանի պղնձահանքերը, մյուս կողմից՝ մինչև Ջրախորը, որտեղ կառուցված

---

[26] Անդ., էջ 75, 84, 86, 92։

[27] Ապագա մանրաղնին հետազոտությունը կարող է ապացուցել, որ այդ շենքը իր որոշ մասերով կարող էր պատկանել և XII դարին։

[28] «Դավիթ Բեկ», 1908, էջ 528, Ալիշան Ղ., Սիսական, էջ 276։ Գյուղը իր այժմյան Քաղամիկ անունը ստացել է Կապան քաղաքին հակադրելու համար։

[29] Օրբելեան Ստ., անդ., գլ. խե, էջ 239 և 518։